

Yerevan, [DATE] October 2018

Երևան, [DATE] հոկտեմբերի 2018թ.

THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF
ARMENIA
ACTING ON BEHALF OF THE REPUBLIC OF
ARMENIA
(AS THE GOVERNMENT)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ,
ՈՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ
(ՈՐՊԵՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ)

AND

ԵՎ

ARMPower CJSC
(AS THE DEVELOPER)

ԱՐՄՓԱՌԻԵՐ ՓԲԸ-ն
(ՈՐՊԵՍ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ)

AND

ԵՎ

RENCO S.P.A
(AS THE SPONSOR)

ՌԵՆԿՈ Ս.Պ.Ա
(ՈՐՊԵՍ ՀՈՎԱՆԱՎՈՐ)

SIDE AGREEMENT TO AMENDED AND
RESTATED FRAMEWORK AGREEMENT

Հայաստանի Հանրապետությունում՝ Երևան
քաղաքի տարածքում 250ՄՎտ գազային
վառելիքով կոմբինացված ցիկլով
էլեկտրակայան նախագծելու, զարգացնելու,
ֆինանսավորելու, կառուցելու,
սեփականության իրավունքով
տիրապետելու, գործարկելու և
պահպանելու վերաբերյալ
ՓՈՓՈՒՎԱԾ ԵՎ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԱԾ
ՇՐՋԱՆԱԿԱՑԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ
ՀԱՎԵԼՑԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

to

Design, Develop, Finance, Construct, Own,
Operate and Maintain
a 250MW Gas-Fired
Combined Cycle Power Plant
in the territory of Yerevan,
Republic of Armenia

CONTENTS
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Clause Կէտ	Page Էջ
1 DEFINITIONS AND INTERPRETATION	5
1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ	5
2 REPRESENTATIONS AND WARRANTIES OF THE DEVELOPER	9
2. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	9
3 REPRESENTATIONS AND WARRANTIES OF THE GOVERNMENT	11
3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	11
4 "LENDER AMENDMENT" VARIATIONS.....	12
4. «ՎԱՐԿԱՏՈՒԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ	12
5 NOTICES	21
5. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ	21
6 ASSIGNMENT AND TRANSFER	23
6. ԶԻԶՈՒՄ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՒՄ	23
7 INVALIDITY	23
7. ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅՈՒՆ	23
8 NO PARTNERSHIP	24
8. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	24
9 VARIATION	24
9. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	24
10 WAIVER	24
10. ՀՐԱԺԱՐՈՒՄ	24
11 ENTIRE AGREEMENT	24
11. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ	24
12 SURVIVAL	25
12. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՆԱԼԸ	25
13 SOVEREIGN IMMUNITY	25
13. ԻՆՔՆԻՇԽԱՆ ԱՆՁԵՌՆՄԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ	25
14 FURTHER ASSURANCE.....	26

14.	ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ.....	26
15	COUNTERPARTS.....	26
15.	ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ.....	26
16	DISPUTE RESOLUTION.....	27
16.	ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ.....	27
17	GOVERNING LAW.....	30
17.	ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՔ.....	30
18	CONTRACT LANGUAGE.....	31
18.	ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼԵԶՈՒՆ.....	31
19	CLARIFICATION REGARDING FMA.....	31
19.	ՇՀ-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ.....	31

THIS AGREEMENT is made at Yerevan on the [DATE] 2018

ՍՈՒՑՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ կնքվել է Երևանում [DATE] 2018թ.-ին

BETWEEN:

- (1) **THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA, ACTING ON BEHALF OF THE REPUBLIC OF ARMENIA** having its administrative office at Republic Square, Government House 1, 0010 Yerevan, Republic of Armenia, hereinafter referred to as the **"Government"** (which expression shall, unless the context requires otherwise, include its successors and permitted assigns);
- (1) **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՈՐԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**, և որի վարչական նստավայրը գտնվում է՝ Հայաստանի Հանրապետություն, 0010 Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1 հասցեում, այսուհետ՝ **«Կառավարություն»** (ինչպիսի արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում),
- (2) **ARMPOWER CJSC**, a company incorporated and registered in the Republic of Armenia pursuant to Armenian law (with company number 286.120.924562), and having its registered office at Vazgen Sargsyan Street 10, Kentron, 0010 Yerevan, Armenia, hereinafter referred to as the **"Developer"** (which expression shall, unless the context requires otherwise, include its successors and permitted assigns); and
- (2) **ԱՐՄՓԱՌԻԵՐ ՓԲԸ-ի**, Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված և գրանցված ընկերության (գրանցման համարը՝ 286.120.924562), որի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն 0010, Վազգեն Սարգսյանի փող. 10 հասցեն, այսուհետ՝ **«Կառուցապատող»** (ինչպիսի արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում), և
- (3) **RENCO S.p.A**, a public company incorporated and registered in Italy pursuant to Italian law (with company number 13250670158) and being legally based at Viale Venezia 53, 61121 – Pesaro, Italy, hereinafter referred to as the **"Sponsor"** (which expression shall, unless the context requires otherwise, include its successors and permitted assigns).
- (3) **ՌԵՆԿՈ Ս.պ.Ա-ի**, Իտալիայի օրենքների համաձայն Իտալիայում հիմնադրված և գրանցված բաց բաժնետիրական ընկերության (գրանցման համարը՝ 13250670158), որի իրավաբանական գտնվելու վայրն է՝ Իտալիա, 61121-Պեզարո, Վիալե Վենեցիա 53, հասցեն, այսուհետ՝ **«Հովանավոր»** (ինչպիսի արտահայտությունը ներառում է նաև դրա իրավահաջորդներին և թույլատրելի ցեսիոներներին, եթե համատեքստից այլ բան չի բխում)

ՄԻՋԵՎ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ

WHEREAS:

- A. The Government entered into the **AMENDED AND RESTATED FRAMEWORK AGREEMENT ("FMA")** with the Developer and the Sponsor on [DATE] which incorporated certain amendments proposed by the prospective senior lenders to the Project (the "**Lender Amendments**").
- B. The Government recognises that, as a result of the Lender Amendments, there may be a limited number of circumstances where the operation of the Lender Amendments would result in a state of affairs where, through no fault on the part of the Developer or Sponsor, the continuation of the Project by the Developer would be materially and adversely impacted, which would neither be in the interest of the Government, the Developer nor the Sponsor.
- C. This Agreement sets forth the terms and conditions of the arrangement between the Government, the Developer and the Sponsor to mitigate the consequences of the Lender Amendments.
- D. All references herein to the FMA refer to the FMA, as amended and restated.

- A. Կառավարությունը Կառուցապատողի և Հովանավորի հետ [ԱՄՄԱԹԻՎ]կնքել է **ՓՈՓՈԽՎԱԾ ԵՎ ՎԵՐԱՇԱՐԱԴՐՎԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ** (այսուհետ՝ «ՇՀ»), որտեղ ներառված են Ծրագրի ակնկալվող ավագ վարկատուների կողմից առաջարկված որոշակի փոփոխություններ (այսուհետ՝ «Վարկատուի Փոփոխություններ»):
- B. Կառավարությունն ընդունում է, որ Վարկատուի Փոփոխությունների արդյունքում կարող են ծագել սահմանափակ թվով հանգամանքներ, որոնց պարագայում Վարկատուի Փոփոխությունները կարող են հանգեցնել այնպիսի իրավիճակի, որտեղ ոչ Կառուցապատողի կամ Հովանավորի մեղքով, Կառուցապատողի կողմից Ծրագրի շարունակումը կարող է ենթարկվել էական և բացասական ազդեցության, ինչը չի բխի ո՛չ Կառավարության, ո՛չ Կառուցապատողի, ո՛չ էլ Հովանավորի շահերից:
- C. Սույն Համաձայնագիրը սահմանում է Կառավարության, Կառուցապատողի և Հովանավորի միջև ձեռք բերված պայմանավորվածության պայմանները, որոնք ուղղված են Վարկատուի Փոփոխությունների հետևանքները մեղմացնելուն:
- D. ՇՀ-ին կատարված բոլոր հղումները վերաբերում են ՇՀ-ին, ինչպես որ այն փոփոխվել և վերաշարադրվել է:

NOW, IT IS AGREED AS FOLLOWS:

ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՎԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ՝

1 DEFINITIONS AND INTERPRETATION

1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ

1.1 Interpretations

1.1. Մեկնաբանումներ

In this Agreement unless the context otherwise requires:

Սույն Համաձայնագրում, եթե համատեքստից այլ բան չի բխում՝

(a) any reference to a statutory provision shall include such provision as it is from time to time modified or re-enacted or consolidated so far as such modification or re-enactment or consolidation applies or is capable of applying to any transactions entered into hereunder;

(a) օրենքի դրույթին ցանկացած հղում ներառում է նշված դրույթը, ինչպես որ այն կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել, վերադրվել կամ միավորվել՝ այնքանով, որքանով նման փոփոխությունը, վերադրումումը կամ միավորումը կիրառվում է կամ կարող է կիրառելի լինել սույն Համաձայնագրի համաձայն կնքված որևէ գործարքին.

(b) the words importing singular shall include plural and vice versa, and words denoting natural persons shall include partnerships, firms, companies, corporations, joint ventures, trusts, associations, organisations or other entities (whether or not having a separate legal entity);

(b) եզակիով նշված բառերը ներառում են հոգնակին և հակառակը, իսկ ֆիզիկական անձ նշանակող բառերը ներառում են՝ ընկերակցություններ, ֆիրմաներ, ընկերություններ, կորպորացիաներ, համատեղ ձեռնարկություններ, տրաստեր, ասոցիացիաներ, կազմակերպություններ կամ այլ սուբյեկտներ (անկախ այն բանից, դրանք հանդիսանում են առանձին իրավաբանական անձ, թե ոչ).

(c) the table of contents and any headings in this Agreement are for ease of reference only and shall not affect the construction or interpretation of this Agreement;

(c) սույն Համաձայնագրում զետեղված «բովանդակությունը» և ցանկացած վերնագրեր նախատեսված են միայն հղումների հարմարության համար և չեն ազդում սույն Համաձայնագրի իմաստի կամ մեկնաբանման վրա.

(d) the words "include" and "including" are to be construed without limitation;

(d) «ներառում է» և «ներառյալ» բառերը մեկնաբանվում են առանց սահմանափակման.

(e) any reference to any period of time shall mean a reference to that according to Yerevan time;

(e) հղումը որևէ ժամանակահատվածի նշանակում է հղում դրան՝ ըստ Երևանի ժամանակի.

(f) "Clause" and "Schedule" shall refer, except where the context otherwise requires, to Clauses of and any Schedule to this Agreement, and any Schedules to this Agreement shall form an integral part and parcel of this Agreement and will be in full force and effect as though they were expressly set out in the body of this Agreement;

(f) «Կետ» և «Կցորդ» բառերը վերաբերում են Համաձայնագրի Կետներին և Կցորդներին, եթե համատեքստից այլ բան չի բխում: Համաձայնագրի Կցորդները հանդիսանում են դրա անբաժանելի մասը, և ունեն լիակատար ուժ և գործողություն՝ այնպես, ինչպես եթե դրանք բացահայտորեն ներառված լինեին Համաձայնագրի հիմնական տեքստում.

- | | |
|---|--|
| <p>(g) "Article" and "Appendix" shall refer, except where the context otherwise requires, to Articles of and any Appendix to the FMA;</p> | <p>(g) «Հոդված» և «Հավելված» բառերը վերաբերում են ՇՀ-ի Հոդվածներին և Հավելվածներին, եթե համատեքստից այլ բան չի բխում.</p> |
| <p>(h) any reference at any time to any agreement, deed, instrument, licence or document of any description shall be construed as reference to that agreement, deed, instrument, licence or other document as amended, varied, supplemented, modified or novated at the time of such reference;</p> | <p>(h) ցանկացած հղում որևէ համաձայնագրի, գործարքի, հավաստագրի, գործիքի, լիցենզիայի կամ ցանկացած փաստաթղթի համարվում է հղում այդ համաձայնագրին, գործարքին, հավաստագրին, գործիքին, լիցենզիային կամ այլ փաստաթղթին՝ նման հղում կատարելու պահի դրությամբ դրանցում բոլոր փոփոխություններով, լրացումներով, ձևափոխումներով կամ նորացումներով.</p> |
| <p>(i) unless otherwise stated, any reference to any period commencing "from" a specified day or date and "till" or "until" a specified day or date shall include both such days or dates;</p> | <p>(i) այլ բան նշված չլինելու դեպքում, ցանկացած հղում որևէ ժամանակահատվածի, որը սկսվում է հատուկ սահմանված օրվանից կամ ամսաթվից և տևում է մինչև հատուկ սահմանված օրը կամ ամսաթիվը, ներառում է այդ երկու օրերը կամ ամսաթվերը.</p> |
| <p>(j) unless otherwise specified, any interest to be calculated and payable under this Agreement will apply on a three hundred sixty five (365) Day basis and shall accrue from Day to Day from the respective due date until the relevant payment obligation is fulfilled; and</p> | <p>(j) այլ բան նշված չլինելու դեպքում, սույն Համաձայնագրի ներքո հաշվարկման և վճարման ենթակա ցանկացած տոկոս կիրառվում է երեք հարյուր վաթսուհինգ (365) Օրվա հիմքով և յուրաքանչյուր Օր կուտակվում է համապատասխան ամսաթվից, երբ այն ենթակա էր վճարման, մինչև համապատասխան վճարման պարտավորության կատարումը. և</p> |
| <p>(k) references to any gender include all genders.</p> | <p>(k) որևէ սեռին հղումը ներառում է բոլոր սեռերը:</p> |

1.2 Ambiguities and Discrepancies

1.2. Երկիմաստություններ և անհամապատասխանություններ

In case of ambiguities or discrepancies within this Agreement, the following shall apply:

Սույն Համաձայնագրում երկիմաստությունների կամ անհամապատասխանությունների առկայության դեպքում կիրառվում է հետևյալը՝

- | | |
|--|---|
| <p>(a) between two Clauses of this Agreement, the provisions of specific Clauses relevant to the issue under consideration shall prevail over those in</p> | <p>(a) սույն Համաձայնագրի երկու Կետերի միջև՝ խնդրո առարկային վերաբերող հատուկ Կետերի դրույթները գերակայում են այլ Կետերի դրույթների նկատմամբ.</p> |
|--|---|

other Clauses;

- (b) between any value written in numerals and that in words, the latter shall prevail; and
 - (c) between the provisions of this Agreement and any other documents forming part of this Agreement, the former shall prevail
- (b) թվականներով և բառերով գրված մեծությունների միջև՝ գերակայում է բառերով գրվածը. և
 - (c) սույն Համաձայնագրի և սույն Համաձայնագրի մաս կազմող որևէ այլ փաստաթղթերի դրույթների միջև՝ գերակայում են վերջինները:

1.3 Definitions

In this Agreement, unless the context otherwise requires or unless otherwise defined herein, defined terms shall be as assigned / ascribed thereto in the FMA and the following terms shall have the following meanings assigned/ascribed thereto:

- (a) **"Relevant Event"** has the meaning given to it in Clause 4.2.
- (b) **"Side Agreement Signing Date"** means the date of signing of this Agreement.
- (c) **"Financial Model"** means the Developer's base case model for the Project agreed at Financial Close.

1.4 No Better, No Worse

(a) Any reference in this Agreement to "no better and no worse" or to leaving the Developer in a "no better and no worse position" shall be construed by reference to:

- (i) the Developer's rights, duties and liabilities under or arising pursuant to performance of the FMA, the Financing Documents and the Project Agreements (if and to the extent that the terms of any Government Debt Obligation agreed

1.3. Մահմանումներ

Սույն Համաձայնագրում, եթե համատեքստից կամ սույն Համաձայնագրի դրույթներից այլ բան չի բխում, սահմանված եզրույթներն ունեն ՇՀ-ում դրանց տրված / վերագրված նշանակությունները, իսկ հետևյալ եզրույթներն ունեն ստորև դրանց տրված/վերագրված նշանակությունները՝

- (a) **«Համապատասխան Իրադարձություն»** եզրույթն ունի 4.2 Կետում դրան վերագրված նշանակությունը.
- (b) **«Հավելյալ Համաձայնագրի Ստորագրման Ամսաթիվ»** սույն Համաձայնագրի ստորագրման օրն է.
- (c) **«Ֆինանսական Մոդել»** Կառուցապատողի Ֆինանսավորման Ամփոփման Ժամանակ համաձայնեցված Ծրագրի հիմնական մոդելը:

1.4. Ո՛չ ավելի լավ և ո՛չ ավելի վատ

(a) Սույն Համաձայնագրում ցանկացած հղում «ոչ ավելի լավ և ոչ ավելի վատ» կամ Կառուցապատողին «ոչ ավելի լավ և ոչ ավելի վատ դրության» մեջ թողնելուն պետք է մեկնաբանվի հետևյալի առնչությամբ.

- (i) ՇՀ-ի, Ֆինանսավորման Փաստաթղթերի և Ծրագրի Պայմանագրերի ներքո կամ դրանց կատարելու կապակցությամբ ծագող Կառուցապատողի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության (եթե և այնքանով,

pursuant to Clause 4.5 result in any changes to the terms of any of the Project Agreements); and

(ii) the Developer's ability to perform its obligations and exercise its rights under the FMA, the Financing Documents and the Project Agreements (if and to the extent that the terms of any Government Debt Obligation agreed pursuant to Clause 4.5 result in any changes to the terms of any of the Project Agreements),

so as to ensure that:

(b) the Developer is (and its investors are) left in a position which is no better and no worse in relation to its internal rate of return and commercial projections by reference to the relevant outputs from the Financial Model that the Parties shall agree in good faith are applicable to the determining what constitutes no better and no worse as shall be applicable immediately prior to the Relevant Event (and assuming that the Relevant Event had not occurred); and

(c) the ability of the Developer to comply with the FMA and the Project Agreements (if and to the extent that the terms of any Government Debt Obligation agreed pursuant to Clause 4.5 result in any changes to the terms of any of the Project Agreements) is not adversely affected or improved as a consequence of the Relevant Event.

2 REPRESENTATIONS AND WARRANTIES OF THE DEVELOPER

որքանով Կետ 4.5-ի համաձայն համաձայնեցված Կառավարության Պարտքային Պարտավորությունների պայմանները հանգեցնում են Ծրագրի Պայմանագրերի պայմանների փոփոխության) և

(ii) ՇՀ-ի, Ֆինանսավորման Փաստաթղթերի և Ծրագրի Պայմանագրերի ներքո Կառուցապատողի պարտականությունները կատարելու և իրավունքներն իրագործելու ունակության (եթե և այնքանով, որքանով Կետ 4.5-ի համաձայն համաձայնեցված Կառավարության Պարտքային Պարտավորությունների պայմանները հանգեցնում են Ծրագրի Պայմանագրերի պայմանների փոփոխության)՝

այնպես, որ ապահովվի այն, որ.

(b) Կառուցապատողը հայտնվում է (և իր ներդրողները հայտնվում են) ոչ ավելի լավ և ոչ ավելի վատ դրության մեջ՝ շահութաբերության ներքին նորմի և ակնկալվող կումերցիոն կանխատեսումների առումով, համեմատած Ֆինանսական Մոդելով նախատեսված համապատասխան արդյունքների հետ, որոնք Կողմերի բարեխիղճ համաձայնությամբ պետք է կիրառվեն ո՛չ ավելի լավ և ո՛չ ավելի վատ դրությունը որոշելու համար, ինչպես որ կիրառելի է մինչև Համապատասխան Իրադարձության վրա հասնելը (և ենթադրելով, որ Համապատասխան Իրադարձությունը վրա չի հասել). և

(c) ՇՀ-ի և Ծրագրի Պայմանագրերի պահանջները պահպանելու Կառուցապատողի ունակությունը (եթե և այնքանով, որքանով 4.5 Կետի համաձայն համաձայնեցված Կառավարության Պարտքային Պարտավորությունների պայմանները հանգեցնում են որևէ Ծրագրի Պայմանագրի փոփոխության) չի ենթարկվում անբարենպաստ կամ բարենպաստ ազդեցության՝ Համապատասխան Իրադարձության հետևանքով:

2. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

2.1 The Developer represents and warrants to the Government that:

(a) it has full power and authority to execute, deliver and perform its obligations under this Agreement;

(b) it has taken all necessary action to authorise the execution, delivery and performance of this Agreement;

(c) this Agreement constitutes its legal, valid and binding obligation, enforceable against it in accordance with the terms hereof;

(d) there are no actions, suits or proceedings pending or to its best knowledge, threatened against or affecting it before any court, administrative body or arbitral tribunal which might materially and adversely affect its ability to meet or perform any of its obligations under this Agreement;

(e) it has complied with all laws applicable to it in all material respects which in the aggregate have or may have a material adverse effect on its ability to perform its obligations under this Agreement; and

(f) no sums, in cash or in kind or inducement of any type, have been paid or will be paid by it or on its behalf, to any Person by way of fees, commission or otherwise for the granting of the Project or entering into this Agreement or for influencing or attempting to influence any officer or employee of any Government Authority in connection therewith.

2.1. Կառուցապատողը հավաստում և երաշխավորում է Կառավարությանը, որ

(a) ինքը լիովին լիազորված է ստորագրել և հանձնել սույն Համաձայնագիրը և կատարել դրա ներքո իր պարտավորությունները,

(b) ինքը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ գործողությունները սույն Համաձայնագրի ստորագրումը, հանձնումը և կատարումը թույլատրելու համար,

(c) սույն Համաձայնագիրը կազմում է իր օրինական, վավեր և պարտավորեցնող պարտավորությունը, որը կարող է հարկադրվել իր հանդեպ՝ սույն Համաձայնագրի պայմանների համապատասխան,

(d) որևէ դատարանում, վարչական մարմնում կամ արբիտրաժային տրիբունալում չկա ընթացիկ կամ, որքան որ իրեն հայտնի է, իրեն սպառնացող կամ իր վրա ազդեցություն ունեցող ոչ մի իրավաբանական գործողություն, հայց կամ վարույթ, որը կարող է էական կամ բացասաբար ազդել սույն Համաձայնագրով իր պարտավորությունները կատարելու ունակության վրա,

(e) ինքը պահպանել է իր նկատմամբ բոլոր էական առումներով կիրառելի բոլոր օրենքները, որոնք ընդհանուր առմամբ էական անբարենպաստ ազդեցություն ունեն կամ կարող են ունենալ սույն Համաձայնագրով իր պարտավորությունները կատարելու ունակության վրա և,

(f) իր կողմից կամ անունից չի վճարվել և չի վճարվելու ոչ մի գումար, լինի դա կանխիկ, թե՛ բնեղենով կամ որպես խրախուսանք, որևէ Անձի՝ վարձատրության, միջնորդավճարի կամ այլ տեսքով, Ծրագրի իրականացման իրավունքները տրամադրելու կամ սույն Համաձայնագիրը կնքելու համար, կամ վերոգրյալի կապակցությամբ որևէ Պետական Մարմնի պաշտոնատար անձի կամ աշխատողի վրա ազդեցություն գործադրելու համար կամ ազդեցություն գործադրելու փորձ կատարելու համար:

3 REPRESENTATIONS AND WARRANTIES OF THE GOVERNMENT

3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

3.1 The Government represents and warrants to the Developer that:

3.1. Կառավարությունը հավաստում և երաշխավորում է Կառուցապատողին, որ.

(a) it has full power and authority to execute, deliver and perform its obligations under this Agreement;

(a) ինքը լիովին լիազորված է ստորագրել և հանձնել սույն Համաձայնագիրը և կատարել դրա ներքո իր պարտավորությունները,

(b) it has taken all necessary action to authorise the execution, delivery and performance of this Agreement;

(b) ինքը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ գործողությունները սույն Համաձայնագրի ստորագրումը, հանձնումը և կատարումը թույլատրելու համար,

(c) this Agreement constitutes the legal, valid and binding obligation of the Government, enforceable against it in accordance with the terms hereof and are not subject to any further authorisation, budgetary approval or restriction or issuance of a separate budgetary guarantee;

(c) սույն Համաձայնագիրը կազմում է Կառավարության օրինական, վավեր և պարտադրող պարտավորությունը, որը կարող է հարկադրվել իր հանդեպ՝ սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան, և այն ենթակա չէ որևէ հետագա լիազորման, բյուջետային հաստատման կամ սահմանափակման կամ առանձին բյուջետային երաշխիքի տրամադրման.

(d) there are no actions, suits or proceedings pending or to its best knowledge, threatened against or affecting it before any court, administrative body or arbitral tribunal which might materially and adversely affect its ability to meet or perform any of its obligations under this Agreement;

(d) որևէ դատարանում, վարչական մարմնում կամ արբիտրաժային տրիբունալում չկա ընթացիկ կամ, որքան որ իրեն հայտնի է, իրեն սպառնացող կամ իր վրա ազդեցություն ունեցող ոչ մի իրավաբանական գործողություն, հայց կամ վարույթ, որը կարող է էական կամ բացասաբար ազդել սույն Համաձայնագրով իր պարտավորությունները կատարելու կարողության վրա,

(e) it has complied with Applicable Laws in all material respects which in the aggregate have or may have a material adverse effect on its ability to perform its obligations under this Agreement;

(e) ինքը պահպանել է իր նկատմամբ բոլոր էական առումներով կիրառելի բոլոր օրենքները, որոնք ընդհանուր առմամբ էական անբարենպաստ ազդեցություն ունեն կամ կարող են ունենալ սույն Համաձայնագրով իր պարտավորությունները կատարելու ունակության վրա,

(f) no sums, in cash or in kind or inducement of any type, have been received or will be received, by it or on its behalf, from any Person by way of fees, commission or otherwise for the granting of the Project

(f) իր կողմից կամ անունից չի ստացվել և չի ստացվելու ոչ մի գումար, լինի դա կանխիկ, թե՛ բնեղենով կամ որպես խրախուսանք, որևէ Անձի՝ վարձատրության, միջնորդավճարի կամ այլ տեսքով, Ծրագրի իրականացման իրավունքները

or entering into this Agreement or for influencing or attempting to influence any officer or employee of any Government Authority in connection therewith;

տրամադրելու կամ սույն Համաձայնագիրը կնքելու համար, կամ վերոգրյալի կապակցությամբ որևէ Պետական Մարմնի պաշտոնատար անձի կամ աշխատողի վրա ազդեցություն գործադրելու համար կամ ազդեցություն գործադրելու փորձ կատարելու համար,

(g) agrees that the execution, delivery and performance by it of this Agreement and all other agreements, contracts, documents and writings relating to this Agreement constitute private and commercial acts and not public or sovereign acts; and

(g) համաձայնվում է, որ իր կողմից սույն Համաձայնագրի և Համաձայնագրի հետ կապված բոլոր այլ համաձայնագրերի, պայմանագրերի, փաստաթղթերի ստորագրումը, հանձնումը և կատարումը հանդիսանում են մասնավոր և առևտրային գործողություններ, այլ ոչ թե հանրային կամ ինքնիշխան գործողություններ, և

(h) consents generally in respect of the enforcement of any judgment against it in any proceedings arising from disputes related to this Agreement, it being expressly understood that this does not apply to acts of the Government in its sovereign capacity in relation to the Developer or any other party in any jurisdiction to the giving of any relief or the issue of any process in connection with such proceedings.

(h) ընդհանուր առմամբ համաձայնվում է իր դեմ ցանկացած դատական ակտի հարկադրմանը ցանկացած վարույթներով, որոնք բխում են սույն Համաձայնագրի հետ կապված վեճերից, ընդ որում հստակորեն հասկացվում է, որ սա կիրառելի չէ իր ինքնիշխան կարգավիճակում Կառավարության գործողությունների նկատմամբ Կառուցապատողի կամ ցանկացած այլ կողմի առնչությամբ որևէ տարածքում որևէ ազատում տրամադրելու կամ այդ վարույթների հետ կապված որևէ գործընթացի սկսման հարցում:

4 "LENDER AMENDMENT" VARIATIONS

4. «ՎԱՐԿԱՏՈՒԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1 If the Developer serves a Termination Notice pursuant to any of Articles 16.2(a) to (c) of the FMA, then, in accordance with Article 17.2(b) of the FMA, the Government is obliged to purchase the Project at the Government Event of Default Purchase Price set out in Appendix 3 of the FMA.

4.1. Եթե Կառուցապատողը ՇՀ-ի 16.2(a)-ից (c) Հոդվածներից որևէ մեկի համաձայն ներկայացնում է Դադարեցման Ծանուցում, ապա ՇՀ-ի Հոդված 17.2(b)-ի համաձայն, Կառավարությունը պարտավորվում է գնել Ծրագիրը ՇՀ-ի Հավելված 3-ում նշված Կառավարության Կետանցի Դեպքի Գնման Գնով:

4.2 If the Developer serves a Termination Notice pursuant to any of Articles 16.2(d) to (i) of the FMA (the occurrence of the underlying event or circumstance which results in such Termination Notice being a **"Relevant**

4.2. Եթե Կառուցապատողը ՇՀ-ի 16.2 (d)-ից (i) Հոդվածներից որևէ մեկի համաձայն ներկայացնում է Դադարեցման Ծանուցում (այսուհետ այդ Դադարեցման Ծանուցման տրման համար հիմք հանդիսացող իրադարձության կամ հանգամանքի առաջացումը՝ **«Համապատասխան**

Event"), then, in accordance with Article 17.2(b) of the FMA, the Government will either (a) purchase the Project at the Government Event of Default Purchase Price or (b) exercise the Post-COD Option or the Pre-COD Option, as described below.

4.3 For any Termination Notice in respect of any of Articles 16.2(d) to (i) of the FMA served by the Developer on or after Commercial Operation Date, the Government may choose to prepay the Senior Debt in accordance with Article 17.2(b) of the FMA ("**Post-COD Option**") as follows:

(a) if the Government chooses the Post-COD Option, it shall, within forty-five (45) Days of receiving the Termination Notice from the Developer, serve a written notice on the Developer that it exercises the Post-COD Option; and

(b) within three hundred and sixty (360) Days of the date of the Developer's Termination Notice, the Government shall make sufficient funds available to the Developer so that the Developer can pre-pay the total amount of Senior Debt to the Financing Parties, including all accrued interest, fees and any cost related to the unwinding of hedges.

4.4 For any Termination Notice in respect of any of Articles 16.2(d) to (i) of the FMA served by the Developer prior to Commercial Operation Date, the Government may choose to prepay the Senior Debt in accordance with Article 17.2(b) of the FMA ("**Pre-COD Option**") as follows:

(a) if the Government chooses the Pre-COD Option, it shall, within forty-five (45)

Իրադարձություն»), ապա ՇՀ-ի Հոդված 17.2(b)-ի համաձայն Կառավարությունը կ'ամ (a) գնում է Ծրագիրը Կառավարության Կետանցի Դեպքի Գնման Գնով կ'ամ (b) գործադրում է Նախա-ԿՇԱ-յի Այլընտրանքը կամ Հետ-ԿՇԱ-յի Այլընտրանքը, ինչպես նկարագրված է ստորև:

4.3. ՇՀ-ի 16.2 (d)-ից (i) Հոդվածներից որևէ մեկի համաձայն Կոմերցիոն Շահագործման Ամսաթվին կամ դրանից հետո Կառուցապատողի կողմից ներկայացված Դադարեցման Ծանուցման կապակցությամբ, Կառավարությունը կարող է որոշել նախապես մարել Ավագ Պարտքը համաձայն ՇՀ-ի 17.2(b) Հոդվածի («**Հետ-ԿՇԱ-յի Այլընտրանք**») հետևյալ կերպ.

(a) Եթե Կառավարությունն ընտրում է Հետ-ԿՇԱ-յի Այլընտրանքը, ապա այն պետք է Կառուցապատողից Դադարեցման Ծանուցում ստանալուց հետո քառասունհինգ (45) Օրվա ընթացքում գրավոր ծանուցում տրամադրի Կառուցապատողին առ այն, որ ինքը գործադրում է Հետ-ԿՇԱ-յի Այլընտրանքը, և

(b) Կառուցապատողի Դադարեցման Ծանուցման ամսաթվից երեք հարյուր վաթսուն (360) Օրվա ընթացքում Կառավարությունը պետք է բավարար միջոցներ տրամադրի Կառուցապատողին, որպեսզի Կառուցապատողը կարողանա նախապես մարել Ֆինանսավորող Կողմերին Ավագ Պարտքի ամբողջ գումարը, այդ թվում բոլոր հաշվարկված տոկոսները, վճարները և հեջերի փակման հետ կապված ցանկացած ծախս:

4.4. Կառուցապատողի կողմից ՇՀ-ի 16.2(d)-ից (i) Հոդվածներից որևէ մեկի համաձայն նախքան Կոմերցիոն Շահագործման Ամսաթիվը ներկայացրած Դադարեցման Ծանուցման կապակցությամբ, Կառավարությունը կարող է որոշել նախապես մարել Ավագ Պարտքը համաձայն ՇՀ-ի 17.2(b) Հոդվածի (այսուհետ՝ «**Նախա-ԿՇԱ-յի Այլընտրանք**») հետևյալ կերպ՝

(a) Եթե Կառավարությունը ընտրում է Նախա-ԿՇԱ-յի Այլընտրանքը, ապա պետք է

Days of receiving the Termination Notice from the Developer, serve a written notice on the Developer that it exercises the Pre-COD Option;

(b) within three hundred and sixty (360) Days of the date of the Developer's Termination Notice, the Government shall make sufficient funds available to the Developer so that the Developer can pre-pay the total amount of Senior Debt to the Financing Parties, including all accrued interest, fees and any cost related to the unwinding of hedges.

(c) In addition, to facilitate the achievement of the Commercial Operation Date by the Developer, within three hundred and sixty (360) Days after service of the Pre-COD Option notice, the Government shall, subject to Clause 4.4(d), procure that substitute senior debt finance for an amount at least equivalent to the amount of undisbursed Senior Debt as at the date of pre-payment pursuant to Clause 4.4(b) is made available to the Developer from lender(s) who are reasonably acceptable to the Sponsor and the Developer and on terms that are reasonably acceptable to the Sponsor and the Developer with 'reasonable acceptability' requiring that:

(i) such lender(s) and terms, as applicable:

(A) do not result in a direct or indirect breach of any law or regulation applicable to the Developer, any of the Developer's shareholders and/or the group companies of each shareholder;

Կառուցապատողից Դադարեցման Ծանուցում ստանալուց հետո քառասունհինգ (45) Օրվա ընթացքում տրամադրի գրավոր ծանուցում Կառուցապատողին առ այն, որ ինքը գործադրում է Նախա-ԿՇԱ-յի Այլընտրանքը.

(b) Կառուցապատողի Դադարեցման Ծանուցման ամսաթվից երեք հարյուր վաթսուն (360) Օրվա ընթացքում Կառավարությունը պետք է բավարար միջոցներ տրամադրի Կառուցապատողին, որպեսզի Կառուցապատողը կարողանա նախապես մարել Ֆինանսավորող Կողմերին Ավագ Պարտքի ամբողջ գումարը, այդ թվում բոլոր հաշվարկված տոկոսները, վճարները և հեջերի փակման հետ կապված ցանկացած ծախս:

(c) Բացի այդ, Կառուցապատողի կողմից Կումերցիոն Շահագործման Ամսաթվին հասնելուն օժանդակելու նպատակով, Կառավարությունը ,4.4(d) Կետի համաձայն, Նախա-ԿՇԱ-յի Այլընտրանքի ծանուցման ներկայացումից երեք հարյուր վաթսուն (360) Օրվա ընթացքում պետք է ապահովի, որ Կառուցապատողին տրամադրվի փոխարինող ավագ պարտքային ֆինանսավորում, որի գումարը համարժեք կլինի առնվազն 4.4(b) Կետով նախատեսված նախապես մարման ամսաթվի դրությամբ չտրամադրված Ավագ Պարտքի գումարին, այնպիսի վարկատու(ներ)ի կողմից, որոնք ողջամտորեն ընդունելի են Հովանավորի և Կառուցապատողի համար և այնպիսի պայմաններով, որոնք ողջամտորեն ընդունելի են Հովանավորի և Կառուցապատողի համար, երբ «ողջամիտ ընդունելիությունը» ենթադրում է, որ՝

(i) այնպիսի վարկատու(ներ)ը և պայմանները, համապատասխանաբար.

(A) չեն հանգեցնում որևէ օրենքի կամ իրավական ակտի ուղղակի կամ անուղղակի խախտման, որը կիրառելի է Կառուցապատողի, Կառուցապատողի որևէ բաժնետիրոջ և/կամ յուրաքանչյուր բաժնետիրոջ իմբի որևէ ընկերությունների նկատմամբ.

(B) do not result in the direct or indirect violation of any national or international sanctions or embargos by the Developer, the Developer's shareholders and/or any of the group companies of each shareholder;

(C) have at the time of entering into the finance documents for such substitute debt finance a long term investment credit rating from S&P (being at least BBB-) and from at least one of Fitch (being at least BBB-) and Moodys (being at least Baa3);

(D) are banks or financial institutions which are active in the primary debt markets and which are, as an ongoing and substantial part of their business, providers of long term, senior debt finance (which, for the avoidance of doubt, shall mean that it will not be reasonably acceptable for a proposed lender to be a distressed debt fund, a vulture fund or any financial institution specialising in the acquisition of debt or securities of entities experiencing financial distress or insolvency);

(ii) such substitute debt finance would leave the Developer in no better and no worse a position than it would otherwise have been (assuming that the Relevant Event had not occurred); and

(iii) the finance documents for such

(B) չեն հանգեցնում որևէ ներպետական կամ միջազգային պատժամիջոցների կամ բեռնարգելքի ուղղակի կամ անուղղակի խախտման, որոնք կիրառելի են Կառուցապատողի, Կառուցապատողի որևէ բաժնետիրոջ և/կամ յուրաքանչյուր բաժնետիրոջ խմբի որևէ ընկերությունների նկատմամբ.

(C) փոխարինող պարտքային ֆինանսավորման համար ֆինանսավորման փաստաթղթերի կնքման պահի դրությամբ ունեն երկարաժամկետ ներդրումային վարկունակություն վարկանիշ, տրված S&P-ի կողմից (առնվազն BBB-) և առնվազն ևս մեկ վարկանիշ՝ տրված Fitch-ի կողմից (առնվազն BBB-) կամ Moodys-ի կողմից (առնվազն Baa3).

(D) հանդիսանում են բանկեր կամ ֆինանսական հաստատություններ, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում պարտքի առաջնային շուկաներում և որոնք, որպես իրենց գործարար գործունեության շարունակական և էական մաս, հանդիսանում են երկարաժամկետ, ավագ պարտքերի ֆինանսավորման տրամադրողներ (ինչը, կասկածներից խուսափելու համար, նշանակում է, որ ողջամտորեն ընդունելի չի լինելու, որ առաջարկված վարկատուն հանդիսանա խնդրահարույց պարտքերի ֆոնդ, «գիշակեր» ֆոնդ կամ որևէ ֆինանսական հաստատություն, որը մասնագիտացած է ֆինանսական ճգնաժամի մեջ կամ անվճարունակության վիճակում գտնվող սուբյեկտների պարտքերի կամ արժեթղթերի ձեռքբերման մեջ).

(ii) այդպիսի փոխարինող պարտքային ֆինանսավորումը Կառուցապատողին դնում է այլապես ստեղծվելիք դրության համեմատ ո՛չ ավելի լավ և ո՛չ ավելի վատ դրության մեջ (ենթադրելով, որ Համապատասխան Իրադարձությունը տեղի չէր ունեցել). և

(iii) այդպիսի փոխարինող պարտքային

substitute debt finance shall be in the English language, be governed by English law and provide for disputes to be finally resolved by institutional offshore arbitration.

Ֆինանսավորման համար ձևակերպվող ֆինանսավորման փաստաթղթերը պետք է լինեն անգլերեն լեզվով, կարգավորվեն անգլիական իրավունքով և նախատեսեն համապատասխան երկրից դուրս գործող ինստիտուցիոնալ արբիտրաժի կողմից վեճերի վերջնական լուծում:

(d) Until such time as the Government has procured the substitute debt finance pursuant to Clause 4.4(c), the Government shall either:

(d) Մինչև այն պահը, երբ Կառավարությունը կապահովի փոխարինող պարտքային ֆինանսավորումը 4.4(c) Կետի համաձայն, Կառավարությունը պետք է կատարի հետևյալ գործողություններից մեկը

(i) pay to the Developer on an interim basis:

(i) վճարի Կառուցապատողին ժամանակավոր հիմքով՝

(A) all amounts reasonably and properly incurred by the Developer in procuring that the Site and the Plant is kept safe and secure;

(A) բոլոր այն գումարները, որոնց Կառուցապատողի կողմից վճարման պարտավորությունը առաջացել է ինելամիտ և պատշաճ կերպով,՝ Տարածքի և Կայանի անվտանգությունը և ապահովությունը ապահովելու առնչությամբ.

(B) all costs which the Developer is liable to pay to the EPC Contractor and/or the O&M Contractor under the EPC Contract and the O&M Contract respectively as a result of the delay in achieving the Scheduled Commercial Operation Date;

(B) բոլոր վճարները, որոնք Կառուցապատողը պարտավոր է վճարել ՆԳԿ Կապալառուին և/կամ ՇևՍ Կապալառուին, համապատասխանաբար, ՆԳԿ Պայմանագրի և ՇևՍ Պայմանագրի համաձայն՝ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվին հասնելու ուշացման հետևանքով՝.

(C) any other losses, costs or liabilities that the Developer incurs as a result of the delay in achieving the Scheduled Commercial Operation Date; or

(C) ցանկացած այլ կորուստներ, ծախսեր կամ պարտավորություններ, որոնք առաջանում են Կառուցապատողի մոտ Նախատեսված Կոմերցիոն Շահագործման Ամսաթվին հասնելու ուշացման հետևանքով. կամ

(ii) fund the debt element of the construction costs of the Plant through short term unsecured construction grants paid against agreed milestones under the EPC Contract provided that such grant

(ii) ֆինանսավորել շինարարական ծախսերի պարտքային տարրը՝ տրամադրելով կարճաժամկետ չապահովված շինարարական դրամաշնորհներով, որոնք վճարվում են ՆԳԿ Պայմանագրով համաձայնեցված փուլերով՝ պայմանով, որ նման դրամաշնորհներով

monies shall be repaid out of the proceeds of the substitute debt finance procured by the Government pursuant to Clause 4.4(c).

գումարները վերադարձվելու են 4.4(c) Կետի համաձայն Կառավարության կողմից ապահովված փոխարինող պարտքային ֆինանսավորման շրջանակներում տրամադրված միջոցներից:

4.5 Following any indefeasible pre-payment in full of the Senior Debt envisaged as part of the Pre-COD Option or Post-COD Option:

4.5. Նախա-ԿՇԱ-յի Այլընտրանքի կամ Հետ-ԿՇԱ-յի Այլընտրանքի շրջանակներում Ավագ Պարտքն ամբողջությամբ և անվերապահորեն նախապես մարելուց հետո՝

(a) the Developer shall owe a new debt obligation to the Government (the "Government Debt Obligation") in an amount equal to the amount of the Senior Debt pre-paid pursuant to Clause 4.3(b) or 4.4(b);

(a) Կառուցապատողի մոտ նոր պարտքային պարտավորություն է առաջանում Կառավարության հանդեպ (այսուհետ՝ «Կառավարության Պարտքային Պարտավորություն»)՝ 4.3(b) կամ 4.4(b) Կետերի համաձայն նախապես մարված Ավագ Պարտքի գումարի չափով:

(b) the terms of this Government Debt Obligation shall be agreed by the Parties and will be set-out in a "Memorandum" within forty-five (45) Days following such pre-payment of the Senior Debt and the terms shall comply with the following principles:

(b) Կառավարության Պարտքային Պարտավորության պայմանները Ավագ Պարտքի նախապես մարումից հետո քառասունհինգ (45) Օրվա ընթացքում համաձայնեցվում են Կողմերի միջև և ամրագրվում են «Հուշագրում», որի պայմանները պետք է համապատասխանեն հետևյալ սկզբունքներին՝

(i) the terms shall result in the Developer being in no better and no worse position than it would otherwise have been (assuming that the Relevant Event had not occurred);

(i) պայմանները պետք է Կառուցապատողին դնեն այլապես ստեղծվելիք դրության համեմատ ո՛չ ավելի լավ և ո՛չ ավելի վատ դրության մեջ, (ենթադրելով, որ Համապատասխան Իրադարձությունը տեղի չէր ունեցել):

(ii) any material failure by the Developer to make the repayment of the debt contemplated by this Clause 4.5 which is not cured within forty-five (45) Days' notice thereof will entitle the Government to terminate the FMA for a Developer Event of Default; and

(ii) Կառուցապատողի կողմից 4.5 Կետով նախատեսված պարտքի վերադարձը կատարելու պարտավորության էական խախտումը, որը շտկված չէ այդ մասին Կառավարության ծանուցումը ստանալուց քառասունհինգ (45) Օրվա ընթացքում, Կառավարությունն իրավունք է տալիս դադարեցնել ՇՀ-ն՝ Կառուցապատողի Կետանցի Դեպքի հիմքով, և

(iii) to ensure that the Developer is in no better and no worse position, the Developer's repayment obligation in

(iii) հավաստիանալու համար, որ Կառուցապատողը ո՛չ ավելի լավ և ո՛չ ավելի վատ դրության մեջ է գտնվում,

respect of the Government Debt Obligation shall be that, at the end of every semi-annual period, the Developer shall make a repayment which is equal to 50% of Available Cash. "Available Cash" shall be the PPA revenues received during such semi-annual period less all operating, maintenance and fixed costs (including, but not limited to, any substitute senior debt financing procured under Clause 4.4(c) above and all tax payments) payable by the Developer during the same period;

Կառուցապատողի մարման պարտավորությունը Կառավարության Պարտքային Պարտավորության առումով պետք է լինեն այնպիսին, որ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին Կառուցապատողը պետք է մարում կատարի, որը հավասար է Հասանելի Դրամական Միջոցների 50%-ին: «Հասանելի Դրամական Միջոցները» կազմում են այդ կիսամյակի ընթացքում ԷԳՊ-ից ստացված հասույթները՝ հանած շահագործման, սպասարկման և հաստատուն բոլոր այն ծախսերը (ներառյալ, առանց սահմանափակումների, վերոգրյալ 4.4(c) Կետի համաձայն տրամադրված որևէ փոխարինող ավագ պարտքային ֆինանսավորման հետ կապված և բոլոր հարկային վճարումները), որոնք ենթակա են վճարման Կառուցապատողի կողմից միննույն ժամանակահատվածում:

(c) contemporaneously with agreeing the Memorandum, the Parties shall agree, in writing, amendments to the FMA which will leave the Developer in no better and no worse a position than it would otherwise have been (assuming that the Relevant Event had not occurred).

(c) Հուշագիրը համաձայնեցնելու հետ միաժամանակ Կողմերը համաձայնում են գրավոր փոփոխություններ կատարել ՇՀ-ում, որոնք Կառուցապատողին դնում են այլապես ստեղծվելիք դրության համեմատ ո՛չ ավելի լավ և ո՛չ ավելի վատ դրության մեջ, (ենթադրելով, որ Համապատասխան Իրադարձությունը տեղի չէր ունեցել):

4.6 The Parties agree and acknowledge that following the receipt of the Lender Prepayment Amount by the Developer pursuant to Article 17.2(b) of the FMA and the indefeasible repayment or prepayment in full of all Senior Debt, the FMA shall be amended as follows:

4.6. Կողմերը համաձայնում և ընդունում են, որ ՇՀ-ի 17.2(b) Հոդվածի համաձայն Կառուցապատողի կողմից Վարկատուի Կանխավճարի Գումարը ստանալուց և ողջ Ավագ Պարտքը ամբողջությամբ և անվերապահորեն վերադարձնելուց կամ նախապես մարելուց հետո ՇՀ-ում կատարվում են հետևյալ փոփոխությունները՝

- (a) Any and all provisions in the FMA in respect of Lender Adverse Condition Events shall be deemed to be deleted and of no effect and the FMA;
